ՀՀԿ 11-րդ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀԿ խորհրդի հաշվետվությունը

2. Վերստուգիչ հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը

3. ՀՀԿ կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

4. ՀՀԿ նախագահի ընտրություն

5. ՀՀԿ խորհրդի անդամների ընտրություն

6. ՀՀԿ գործադիր մարմնի անդամների ընտրություն

7. ՀՀԿ վերստուգիչ հանձնաժողովի անդամների ընտրություն

8. ՀՀ նախագահի թեկնածուի առաջադրում

«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԳԱԳԻԿ ՇԱՌՈՒԿՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Համագումարի հարգելի պատվիրակներ, հարգելի գործընկերներ,

ԲՀԿ խորհրդի անունից ուզում եմ ողջունել ՀՀԿ համագումարի պատվիրակներին և մաղթել հաջող աշխատանք:

Խորհրդարանական ընտրություններից հետո մենք կոալիցիոն հուշագիր ենք ստորագրել ՀՀԿ-ի հետ և ստանձնել ենք համատեղ պատասխանատվություն մեր երկրի օրենսդիր և գործադիր իշխանությունների գործունեության համար: Եվ մենք այսօր վստահորեն կարող ենք ասել ԱԺՄ-ում, թե կառավարությունում մեր կուսակցության ներկայացուցիչները ստեղծել են փոխադարձ հարաբերություն, որը հիմնված է փոխադարձ հարգանքի և վստահության: Համոզված եմ, որ այդ մթնոլորտը մեր աշխատանքում կարդարացնի ժողովրդի սպասելիքները: Այսօր դուք ընդունելու եք կարևորագույն որոշում. ՀՀԿ-ն առաջադրելու է իր թեկնածուին գալիք նախագահական ընտրություններում և, ըստ հուշագրի, մենք պետք է ունենանք մեկ թեկնածու: Մենք մեր աշխատանքով պետք է կարողանանք իրականացնել այդ հաղթանակը: Մենք շատ լավ գիտենք, որ ձեր որոշման հիմքում մեծ պատասխանատվություն է Հայաստանի ապագայի, ժողովրդի անվտանգության և մեր երկրի բարգավաճման հարցում: Մենք համոզված ենք նաեւ, որ մեր երկրի վերջին տարիների արագընթաց զարգացման քաղաքական ուղին պետք է պաշտպանվի և շարունակվի: Դրա պահպանման և շարունակման համար հիմնականում հարկավոր է երկրում լինի քաղաքական կայունություն, հասարակության համերաշխություն, ազգային համաձայնություն և լավատեսություն:

Մենք շատ լավ պատկերացնում ենք մեր բաժին պարտավորվածությունը այդ քաղաքական գործընթացում և լիարժեք պատրաստ ենք արժանապատիվ և լիարժեք այն իրականացնելու:

ՀՅԴ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՅՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Հարգելի ՀՀԿ 11-րդ համագումարի պատվիրակներ, հարգելի հյուրեր,
ՀՅԴ-ն այսօր ողջունում է մեր կուսակցության գործունեության, նրա բարձրագույն ատյանի և ժողովի գումարումը, մի կուսակցություն, որն իր անուրանալի դերն է ունեցել և կունենա՝ անշուշտ ՀՀ 3-րդ հանրապետության անկախության և՛ ամրապնդման, և՛ հզորացման գործում:

Մենք համարում ենք, որ մեր համագործակցությունն աննախադեպ է եղել այս տարիների ընթացքում. ՀՀԿ-ն միակ կուսակցությունն է, որի հետ համագործակցել ենք թե՛ ընդդիմություն եղած ժամանակ, և այն ժամանակ, երբ երկու քաղաքական ուժերն էլ ընդդիմություն էին, և երբ ՀՅԴ-ն էր ընդդիմություն և ՀՀԿ իշխանության մաս էր, և նաեւ հիմա, երբ մենք երկուսով ստանձնել ենք իշխանության մեջ պատասխանատվություն:

Սա իր քաղաքական մշակույթում բացառիկ դեպք է: Բացառիկ դեպք է նաև այն իմաստով, որ լինելով տարբեր գաղափարակիրներ նաեւ մոտեցումների տեր, իհարկե պահպանելով մեր հավատամքը ազգային գաղափարախոսությանը, և ազգային պետական շահերին, մենք միշտ էլ պահպանել ենք գաղափարական պայքարի բովի ժամանակ մեր նաեւ էթիկան, մեր նաեւ բարի հարաբերությունները և առողջ հարաբերությունները: Վստահ եմ, որ այդ կունենա շարունակությունը մեր հետագա համագործակցության մեջ, որովհետեւ մեր համագործակցությունը, մանավանդ այսօր, մենք միասին համաձայնագիր ունենք համագործակցելու, չի բխում նրանից, թե որքան պետք է բաժանում լինի պաշտոնների. ով ինչ պաշտոն կստանձնի, այլ բխում է նրանից, թե ինչպիսի մտահոգությամբ ենք մոտենում ազգային պետական խնդիրներին և ինչքան ենք պատրաստ ստանձնելու և համագործակցելու այդ խնդիրների լուծման ճանապարհին: Առջևում, իհարկե ՀՀ նախագահի ընտրություններն են և այդ ընտրություններն անշուշտ իրենց կնիքը կունենան առաջիկա քաղաքական զարգացումների վրա: Այսօր արդեն ակնհայտ է, որ անցյալի ուժերի ակտիվությունը թելադրվում է ռևանշիստական մղումներով, այսօր արդեն ակնհայտ է, որ փորձ է արվում մեր երկրի պատմությունը շրջելու դեպի հետընթաց:

Մենք հայտարարում ենք, որ պատմությունը երբեք չի կարող գլորել պատմության անիվը հետ, այն պետք է գլորվի առաջ և այս առաջ գլորելու մեջ մենք պետք է լինենք առաջատար և բոլոր ազգային ուժերի հետ միասին ազգային համաձայնության մթնոլորտ ստեղծելու հարցում: Այստեղ ամենակարևոր դերակատարություններից մեկը անկասկած պետք է ունենա ՀՀԿ-ն: Իհարկե, որքան մեծ է պատասխանատվությունը, որքան մեծ է բաժինը պատասխանատվության, այնքան մեծ է նաև ժողովրդի ակնկալիքը այդ քաղաքական ուժերի նկատմամբ եւ մենք վստահ ենք, որ որևէ քաղաքական ուժ, եթե այսօր պատրաստվում է այդ վճռականությամբ հանդես գալ և իր պատասխանատվության բեռը վերցնել այդ կարևոր գործում, անպայման պետք է գիտակցի, որ այլևս ազգային գաղափարների գերակայությունը այսօր անսասանելի է, այլևս պետք է գերիշխեն կեղծ արժեքները ապազգային, այլ նաեւ միայն այս ըմբռնումներից բխող ազգային պետական քաղաքականությունը, որ պետք է իշխանության մեջ մերժվի քաղաքական մենաշնորհի մղումները, որ պետք է առավելագույնս ստեղծվի համաձայնության մթնոլորտ քաղաքական ուժերի միջև, որ պետք է տնտեսության մեջ օրենքի առաջ բոլորը լինեն հավասար, որ չպետք է տուրք տրվի շահամոլներին, գաղափարազուրկ կարիերիստներին, նրանց, ովքեր այս կամ այն քաղաքական կուսակցության դրոշի տակ փորձում են իրենց անձնական շահերը հետապնդել: Սա զգոնության է թելադրում բոլոր քաղաքական ուժերին, ա՛յն քաղաքական ուժերիին, որոնք այսօր պատրաստվում են և հանձնառու են իրենց պատասխանատվության բաժինն ունենալու մեր ապագա երկրի ճակատագրի կերտման գործում:

Ես վստահ եմ, որ այս համագումարը իր մեծ ներդրումը կունենա այս գործում, և նաեւ վստահ եմ, որ ապագայում մեր համագործակցությունը եւս կընթանա ի՛ շահ մեր

երկրի, ի՛ շահ ազգային գաղափարախոսության վերջնական հաղթանակի, ի՛ շատ երկրի հզորացման: Բարի երթ ՀՀԿ-ին:

ՀՀԿ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՆԱՀԻՏ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԵԼՈՒՅԹԸ

Հարգելի կուսակիցներ, հյուրեր

ՀՀԿ 9-րդ հերթական համագումարից հետո ընկած ժամանակահատվածում վերստուգիչ հանձնաժողովի ուշադրության կենտրոնում է եղել կուսակցության ֆինանսատնտեսական գործունեությունը:

Հաշվետու ժամանակահատվածում կուսակցության ֆինանսատնտեսական գործունեությունը ներկայացնում է հետևյալ պատկերը.

2005թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ	
Հաշվարկային հաշվի մնացորդ	7մլն 112 հազ
Դրամարկղի մնացորդ	6 մլն 303 հազ
Ընդամենը մնացորդ առ 01.12.05թ.	**13մլն 415 հազ**

2005թ. դեկտեմբերից մինչև 2007թ. սեպտեմբերի 1-ը դրամական մուտքերը կազմել են 500մլն 979հազ դրամ

այդ թվում՝

շենքերի վաճառքից	4մլն 220 հազ
շենքերի վարձակալությունից	5մլն 703 հազ
անդամավճարներից	464մլն 444 հազ
նվիրատվություններից	26մլն 612 հազ
Ընդամենը՝ մնացորդով	**514մլն 394 հազ**

Նշված ժամանակահատվածում կատարվել են հետևյալ ծախսերը՝

վճարվել են հարկեր

շահութահարկ	1մլն 768 հազ
եկամտահարկ	13մլն 193հազ
ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ)	2մլն 046հազ
գույքահարկ	4մլն 760հազ
հողի հարկ	60հազ
	21մլն 827հազ
Սոց. վճարները կազմել են	52մլն 956հազ
	74մլն 783հազ

Ձեռք են բերվել

հիմն. միջոցներ	
այդ թվում	18 մլն 933հազ

շենքերի, տարածքների ձեռքբերման համար ծախսվել է 6մլն 574հազ
հիմն. միջոցների վարձակալության, նորոգման և սպասարկ. համար ծախսվել է
21մլն 980 հազ
այդ թվում

վարձակալության վճար	13մլն 260 հազ
նորոգման և սպասարկման ծախսեր	8մլն 720 հազ
նյութերի ձեռքբերման համար	117 մլն 614 հազ
էլ. էներգիա	5մլն 400 հազ
փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	30 մլն 620 հազ
գրասենյակային և կոմունալ ծախսեր	5մլն 093 հազ
աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	181մլն 784 հազ
գործուղման և ներկայացուցչական ծախսեր	1մլն 272 հազ
բանկային ծառայությունների ծախսեր	34 հազ
տույժեր, տուգանքներ	144հազ
բարեգործական ծախսեր	10մլն 650 հազ
անդամավճար DEMYC	412հազ
նախընտրական հիմնադրամին	2մլն 500հազ
այլ ծախսեր	692հազ
ընդամենը ծախսեր	**397մլն 128հազ**

Ընդամենը նշված ժամանակահատվածում կուսակցության ծախսերը կազմել են----------471մլն 911հազ

Հաշվարկային հաշվի մնացորդ առ 01.09.07թ.	200հազ
Դրամարկղի մնացորդ	42մլն 283հազ
Ընդամենը մնացորդ առ 01.09.07թ.	**42մլն 483հազ**

Ոչ ընթացիկ նյութական ակտիվները կազմում են 15մլն 597հազ
(«Մեծ անիվ» ՍՊԸ-ից ստացվել է «NISSAN PATHFINDER» ավտոմեքենա):

Մուտքերի և ծախսերի մանրամասն բացվածքը ըստ հոդվածների կցված է հաշվետվությանը :

2007թ. ԱԺ ընտրությունների անցկացման համար ՀՀԿ նախընտրական հիմնադրամ տարբեր կազմակերպություններից և անհատներից մուտք է եղել 58մլն 970հազ դրամ:

Գոյացած միջոցները ծախսվել են նախընտրական քարոզչության տեսահոլովակների պատրաստման և հեռարձակման, ուղիղ եթերի կազմակերպման, գովազդային ծառայության, գովազդային եթերաժամանակի, նախընտրական ծրագրի, բուկլետների, գովազդային նյութերի պատրաստման նպատակով:

Ծախսերը կազմել են 58մլն 910հազ դրամ:

Մնացորդը կազմում է 60հազ դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀԿ վերստուգիչ հանձնաժողովի կողմից պարբերաբար կատարված ստուգումների արդյունքները ցույց են տվել, որ կուսակցության ֆինանսատնտեսական գործունեությունում խախտումներ չեն եղել:

Առաջարկում եմ հաստատել հաշվետվությունը:

ՀՀԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՌՈՒԲԵՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Համագումարի հարգելի մասնակիցներ

Նախ թույլ տվեք ողջունել 11-րդ արտահերթ համագումարի բոլոր մասնակիցներին, մեզ բոլորիս մաղթելով բեղուն և արդյունավետ աշխատանք:

Կուսակցության կանոնադրության համաձայն, Համագումարն իրավազոր է իրականացնել կանոնադրական փոփոխություններ, ինչը մեր կուսակցության պատմության ընթացքում իրականացվել է տարբեր համագումարներում: Յուրաքանչյուր դեպքում առաջարկված կանոնադրական փոփոխությունները բխել են տվյալ ժամանակահատվածում կուսակցության գործունեության խնդիրներից, և հիմնականում նպատակուղղվել են առավել ճկուն և արդյունավետ դարձնելու ներկուսակցական աշխատանքներն ու կուսակցության կառավարման հետ կապված խնդիրները: Վերջին տարիներին, մասնավորապես նախորդ համագումարից հետո մինչ այժմ ընկած ժամանակահատվածում մեծ թվով քաղաքացիներ անդամագրվել են ՀՀԿ-ին, կառուցվածքային առումով ձևավորվել են նոր սկզբնական կազմակերպություններ: Կուսակցությունն այսօր ունի 10 մարզական, 61 տարածքային, 1600-ից ավել սկզբնական կազմակերպություններ՝ 135.000-ից ավել անդամներով: Կուսակցությունն իր գործունեությունն իրականացնում է 5 հիմնական՝ գաղափարա-քարոզչական, քաղաքական, կազմակերպչական, տնտեսական, գործարարության աջակցության հանձնաժողովներում, ինչպես նաև կառուցվածքային առումով աշխատանքները համակարգվում են կանանց, երիտասարդական, մարզական խորհուրդներում:

Այսօր ունենալով էլ ավելի ընգրկուն շարքեր, կայացած խոշոր կառուցվածքային և տարածքային կազմակերպություններ, մենք խնդիր ունենք անելով որոշ կանոնադրական փոփոխություններ, ապահովել կուսակցության հետագա կառավարման արդյունավետ մեխանիզմները, ամրապնդել ներկայացուցչական և կոլեգիալ սկզբունքով կառավարման մարմնի դերը որոշումների կայացման գործում, սահմանել նոր գործառույթների իրականացման օղակները, ամրագրել կուսակցության ղեկավար մարմինների իրավասությունների և պարտավորությունների շրջանակները, սահմանել գործառույթներից բխող մեխանիզմները: Կուսակցության խորհուրդը բոլոր տարածքային և մարզային կառույցներին առաջարկել էր քննարկել նշված խնդիրները և հանդես գալ համապատասխան առաջարկություններով: Ներկայացվել են տարբեր առաջարկներ, ինչպես կուսակցության կառույցների այնպես էլ խորհրդի անդամների կողմից: Կուսակցության խորհուրդը քննարկելով բոլոր առաջարկները, դրանք հանրագումարել և ի մի է բերել, տալով իրավական անհրաժեշտ ձևակերպումներ: Խմբագրական բնույթի հիմնական փոփոխություններն արվել են կանոնադրության 4-րդ, 8-րդ, 9-րդ, և 10-րդ բաժիններում, իսկ 11-րդ բաժնում սահմանվել է կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի, այսինքն գործադիր մարմնի կանոնադրական իրավասություններն ու գործառույթները: Թույլ տվեք հակիրճ ներկայացնել հիմնական փոփոխությունների նշանակությունը և անել որոշ մեկնաբանություններ:

1. Ինչպես արդեն նշեցի կապված կուսակցական կառույցների ընդլայնման հետ, մենք որոշակի խնդիրներ ունենք սկզբնական կազմակերպությունների աշխատանքները կազմակերպելու առումով, ուստի կանոնադրությամբ ավելացվում է նաև սկզբնական կազմակերպության նախագահների տեղակալի ընտրության հանգամանքը:
2. Հաշվի առնելով գործադիր մարմնի գործառույթների շրջանակները, օբյեկտիվորեն անհրաժեշտություն է առաջացել, որպեսզի համագումարը հնարավորություն ունենա լսելու կուսակցության նախագահի և գործադիր մարմնի հաշվետվությունները: Այս դրույթն ամրագրվել է կանոնադրության 8.4 կետի առաջին մասով:

3. Համաձայն փոփոխությունների համագումարը ընտրում է նաև գործադիր մարմնի կազմը, որից հետո ՀՀԿ նախագահը գործադիր մարմնի կազմից ՀՀԿ խորհրդի հաստատմանն է ներկայացնում իր կողմից առաջադրված նախագահի տեղակալների թեկնածությունները:
4. Կանոնադրական հաջորդ լրացումը պայմանավորված է նրանով, որ խորհրդի՝ որպես ներկայացուցչական մարմնի, հաստատմանն է ներկայացվում ԱԺ-ում և կառավարությունում ընտրվող կամ նշանակվող քաղաքական պաշտոնների համար առաջադրված և գործադիր մարմնի հավանությանն արժանացած թեկնածությունները:
5. Հաջորդ լրացմամբ կանոնադրությամբ ամրագրվում է, որ կուսակցության պաշտոնական դիրքորոշումն արտահայտում է նաև ՀՀ ԱԺ-ում կուսակցության խմբակցության ղեկավարը:
6. ՀՀԿ խորհրդի լիազորությունների ընդլայնմամբ նաև ամրագրվում է, որ ՀՀԿ խորհուրդը հանդես է գալիս որպես կուսակցության ներկայացուցչական մարմին:
7. Հաշվի առնելով կուսակցության Նախագահի, խորհրդի և գործադիր մարմնի գործառույթների, լիազորությունների ու պարտականությունների շրջանակները, ինչպես նաև ստացված առաջարկություններում տեղ գտած հիմնավորումները, կանոնադրության առաջարկվող տարբերակից հանվում է կուսակցության խորհրդի նախագահի պաշտոնը: Խորհրդի նիստերի անցկացման ու աշխատանքների համակարգման պարտականությունները դրվում են կուսակցության նախագահի կամ նրա հանձնարարությամբ տեղակալներից որևէ մեկի վրա:
8. Կուսակցության խորհրդի կազմավորման կարգում ևս կան որոշակի լրացումներ, ըստ որոնց ավտոմատ կերպով խորհրդում ընդգրկվում են նաև գործադիր մարմնի անդամները, ինչպես նաև կուսակցության անդամ կառավարության անդամներ և ԱԺ պատգամավորները:
9. Հաջորդ լրացումը սահմանում է, որ կուսակցության խորհուրդը առաջարկություն է անում ՀՀ նախագահի ընտրություններին ՀՀԿ թեկնածուի վերաբերյալ:
10. Հաշվի առնելով տարբեր ժամանակահատվածներում կուսակցության գործառույթների իրականացման հետ կապված խնդիրները, կանոնադրության նախագծում սահմանվել է նաև, որ գործադիր մարմնի անդամների թիվը որոշվում է համագումարի կողմից:
11. Առաջարկվող նախագծի 11.2 կետով հստակեցվում են կուսակցության գործադիր մարմնի իրավասություններն ու պարտականությունները, որոնք վերաբերվում են կուսակցության քաղաքական, կազմակերպա-իրավական և ընթացիկ կառավարման գործառույթների իրականացմանը:

Հարգելի պատվիրակներ: Ես փորձեցի հնարավորինս սեղմ և միաժամանակ ամփոփ կերպով ներկայացնել համագումարին առաջարկվող կանոնադրական փոփոխությունները և լրացումները: Նախագծի տարբերակը Ձեզ բաժանված է և դուք հնարավորություն ունեք ավելի մանրամասն ծանոթանալու բոլոր դրույթներին: Ակնկալում ենք, որ կուսակցության կանոնադրության փոփոխությունների և լրացումների մասին ներկայացվող նախագիծը կարժանանա Ձեր հավանությանը:

Շնորհակալություն ուշադրության համար:

ՀՀԿ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՅՑԸ

Սիրելի պատվիրակներ, հարգարժան հյուրեր,

Այն ժամանակահատվածը, որն ընդգրկում է հաշվետու զեկույցը, թեև շատ երկար չէր, սակայն խիստ հագեցած էր քաղաքական իրադարձություններով, հաջողություններով ու ցավալի կորուստներով: Մի քանի ամիս առաջ մենք կորցրեցինք մեր կուսակցության նախագահին՝ Անդրանիկ Մարգարյանին, որի բացառիկ դերակատարությունը կուսակցության զարգացման և հաջողությունների գործում, երկրի քաղաքական կյանքում դառնալու է ոչ միայն Հանրապետական կուսակցության պատմության փառավոր էջը, այլև մեր պատմության նորագույն շրջանի վավերագրերի կարևոր մասը: Դա չափազանց մեծ կորուստ էր կուսակցության համար ու յուրաքանչյուրիս համար՝ անձնապես: Առավել ևս կուսակցության ապագայի համար բախտորոշ ժամանակահատվածում, խորհրդարանական ընտրությունների նախաշեմին: Ցանկանում եմ կուսակցության խորհրդի անունից ևս մեկ անգամ խորին շնորհակալություն հայտնել բոլոր հանրապետականներին, մեր աջակիցներին, որոնք կարողացան զսպել ցավը, էլ ավելի համախմբվել ու կազմակերպվել՝ ապացուցելով Հանրապետական կուսակցության կենսունակությունն անգամ ամենադժվար պահերին: Դա Անդրանիկ Մարգարյանի հավատամքն էր և դա էր մեզնից պահանջելու նա: Այդ առումով կուսակցության աննախադեպ հաջողությունը խորհրդարանական ընտրություններում ունեցավ նաև խորհրդանշական նշանակություն: Ցանկանում եմ ևս մեկ անգամ շնորհավորել բոլորիս փայլուն արդյունքի համար և հիշեցնել, որ այն որքան պատվաբեր է, նույնքան էլ պարտավորեցնող:

Մայիսի 12–ի խորհրդարանական ընտրությունների արդյունքներով մենք ոչ միայն կարողացանք պահպանել մեր նորանկախ պետության ամբողջ պատմության ուղեկիցը դարձած, կուսակցության համար չափազանց պատվաբեր շարունակական հաջողությունների ավանդույթը, այլև ունեցանք որակապես նոր արդյունք՝ լիակատար խորհրդարանական մեծամասնություն: Իհարկե, մենք երբեք չենք հրաժարվել երկրի վիճակի և կատարվող իրադարձությունների համար պատասխանատվությունից անգամ այն ժամանակ, երբ խորհրդարանում ունեցել ենք ընդամենը հարաբերական մեծամասնություն և յոթ տարի շարունակ, ունենալով վարչապետ և մի քանի նախարարներ, ստիպված ենք եղել ժամանակ առ ժամանակ փոխզիջումների գնալ այլ քաղաքական ուժերի հետ՝ խորհրդարանի բնականոն աշխատանքն ապահովելու նպատակով:

Մայիսյան ընտրություններից հետո կառավարություն ձևավորելիս էլ մենք պատրաստակամություն ենք դրսևորել պատասխանատվությունը կիսելու պատրաստ այլ քաղաքական ուժերի հետ համագործակցելու համար, թեև Հանրապետականը ստացավ բացարձակ մեծամասնություն Ազգային ժողովում: Հավատարիմ համագործակցության և ազգային համաձայնության սկզբունքների հիման վրա գործելու մեր ավանդույթին՝ խորհրդարանական մեծամասնություն ձևավորեցինք «Բարգավաճ Հայաստան» կուսակցության հետ, իսկ կոալիցիոն կառավարություն ձևավորելիս մենք համագործակցության յուրահատուկ ֆորմատ ընտրեցինք ՀՅԴ կուսակցության հետ: Չորրորդ գումարման Ազգային ժողովի աշխատանքներում արդեն իսկ նկատելի են մի շարք առանձնահատկություններ: Նախ, մենք այլևս դժվարություններ չենք ունենում քվեարկությունների ժամանակ և դրա հետևանքով որևէ օրենքի ընդունում չի տապալվել: Երկրորդ, Ազգային ժողովի օրակարգը խիստ հագեցած է օրենսդրական նախաձեռնություններով, որոնք ուղղված են սահմանադրական փոփոխությունների ներդրմանը: Խորհրդարանի աշխատանքի այս փուլի հիմնական խնդիրը անկախ և անաչառ դատական համակարգի ձևավորման համար անհրաժեշտ օրենսդրական հիմքի ստեղծումն է: Դատական համակագի բարեփոխումների երկրորդ և վճռորոշ փուլի

հաջող իրականացումը չափազանց մեծ նշանակություն ունի ոչ միայն այդ համակարգի, այլև մյուս ոլորտներում քաղաքացիական ծառայության լիարժեք կայացման համար։ Կարծում եմ, թե մեր խմբակցությունը, թե խորհրդարանն ընդհանրապես աշխատում են մեծ ծանրաբեռնվածությամբ. թեև ընդամենը երկու ամիս է, ինչ սկսվել է հերթական նստաշրջանը, սակայն արդեն անցկացվել են արտահերթ նիստեր ու նստաշրջան: Եթե ավելացնենք նաև ընտրություններից հետո մեր կուսակցության ղեկավարի՝ Սերժ Սարգսյանի գլխավորած կառավարության գործունեության ամենակարևոր արգասիքը՝ 2008 թվականի բյուջեի նախագիծը, որը ոչ միայն նախատեսում է հարկային եկամուտների աննախադեպ ավելացում, մեր տնտեսական քաղաքականության ամենախոցելի ցուցանիշի՝ հարկեր/ ՀՆԱ հարաբերակցության կտրուկ մեծացում՝ որպես հետևանք կոռուպցիայի դեմ պայքարի, ինչպես նաև արմատական փոփոխություններ սոցիալական ոլորտում և մեր քաղաքացիների կենսապայմանների զգալի բարելավում, ապա, կարծում եմ ակնհայտ կդառնա, որ մեր ձգտումները՝ ուղղված երկրորդ փուլի բարեփոխումներով մեր ժողովրդի կենսամակարդակի որակական փոփոխությանը, ունեն լիարժեք հիմքեր: Իհարկե, ինչպես Ազգային ժողովում կառավարության գործունեության ծրագիրը ներկայացնելիս վարչապետը հայտարարեց, այն տրամաբանական շարունակությունն է կառավարության նախորդ տարիների գործունեության: Եվս մեկ անգամ ցանկանում եմ ընդգծել, որ վերջին յոթ տարիների ընթացքում կառավարությունը, Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի հետ սերտ և արդյունավետ համագործակցությամբ արձանագրել է այնպիսի արդյունքներ, որոնցով մենք կարող ենք հպարտանալ: Բերեմ ընդամենը մի քանի տվյալ՝ անգամ չանդրադառնալով ՀՆԱ-ի երկնիշ տարեկան աճին: Հաճախ կարելի է լսել դժգոհություններ արտահանման անբավարար մակարդակի մասին, բայց արտահանումը վերջին տաս տարիների ընթացքում աճել է 4.4անգամ՝ 230 միլիոն դոլարից հասնելով մինչև 1 միլիարդի, այն դեպքում, երբ ներմուծումն աճել է 2.2 անգամ: Ավելին, եթե տաս տարի առաջ ներմուծումը գերազանցում էր արտահանմանը չորս ամգամ, ապա այսօր միայն երկու անգամ: Ընդ որում, էապես փոխվել է դրանց կառուցվածքը: Այդ տարիներին ութ անգամ աճել է մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքը: Բայց նման արդյունքներով հպարտանալով, մենք չենք մոռանում մեր հիմնախնդիրները. աղքատության հաղթահարումը մնում է դրանցից ամենակարևորը: Իհարկե, այդ տարիներին աղքատների թիվը կրճատվել է ավելի քան երկու անգամ: Այդուհանդերձ, մենք չենք կարող հաշտվել այն մտքի հետ, որ մեր գրեթե ամեն չորրորդ քաղաքացին աղքատ է, որ թոշակառուի ստացած կենսաթոշակը էապես ավելի ցածր է, քան միջին աշխատավարձի չափը և անգամ չի ապահովում նվազագույն կենսապայմաններ: Մեզ չի բավարարում կրթության, գիտության և մշակույթի վիճակը: Հետևաբար մեզ համար չափազանց կարևոր էր, հաջողությամբ ավարտելով մեր երկրի զարգացման առաջին փուլը, որի ընթացքում ձևավորվեցին պետական կառույցները, տնտեսությունը սկսեց իր բնականոն գործունեությունը, ստեղծվել են քաղաքական և իրավական համակարգերի արմատական բարեփոխման հիմքերը, հնարավորություն ստանալ նաև իրագործելու երկրորդ փուլը, որի նպատակը հստակորեն ձևակերպել էինք մեր նախընտրական ծրագրում. հզոր պետություն, բարեկեցիկ ժողովուրդ, արժանապատիվ կյանքով ապրող քաղաքացի:

Հաշվետու ժամանակահատվածը կարևոր շրջափուլ էր նաև ներկուսակցական զարգացումների առումով: Հանրապետական կուսակցությունն այսօր զանգվածային կուսակցություն է: Կուսակցության անդամների թիվն ավելացել է ավելի քան հինգ անգամ և գերազանցում է 135 հազարը: Այսօր մենք ունենք 61 տարածքային կազմակերպություն և ավելի քան 1600 սկզբնական կազմակերպություն: Մինչդեռ 2005թ. վերջին կուսակցությունն ուներ 26 հազար անդամ, 740 սկզբնական կազմակերպություն: Մենք չենք տառապում մեծ թվերի պաշտամունքով: Սակայն,

միաժամանակ չենք ցանկանում արհեստական խոչընդոտներ ստեղծել կուսակցությանն անդամակցելու ցանկություն ունեցողների ճանապարհին: Եթե որևէ մեկը բավարարում է կանոնադրությամբ սահմանված պահանջները, կարող է անդամակցել կուսակցությանը: Ձանգվածային կուսակցությունների դեպքում ավելի է մեծանում սկզբնական և տարածքային կազմակերպությունների դերակատարությունը: Խորհրդարանական ընտրությունները ցույց տվեցին, որ միշտ չէ, որ սկզբնական կամ տարածքային կազմակերպություններն իրենց բարձրության վրա են: Այդ կազմակերպությունները պետք է գլխավորեն մարդիկ, ովքեր առավել հարգանք են վայելում տվյալ բնակավայրում և կարող են ազդեցիկ դերակատարություն ունենալ թե ընտրությունների, և թե ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածներում: Այդ մարդիկ պետք է լավատեղյակ լինեն իրենց բնակավայրերի խնդիրներին ու հոգսերին, կուսակցության ղեկավար մարմիններին հասցնեն դրանք, բնակիչներին հասցնեն այն ծրագրերն ու պլանները, որոնք նախատեսվում է իրականացնել իրենց բնակավայրերում: Այս առումով մենք դեռևս հսկայական ներուժ ունենք թե կուսակցական կառույցների գործունեության արդյունավետության մեծացման, թե մեր կուսակցության նկատմամբ հասարակական կարծիքի բարելավման ուղղությամբ: Մենք պարտավոր ենք այդ հնարավորություններն օգտագործել և առաջիկայում կուսակցության հիմնական խնդիրներից մեկը լինելու է կուսակցության կառույցների գործունեության արդյունավետության մեծացմանն ուղղված միջոցառումների ծրագրի մշակումն ու իրագործումը: Միաժամանակ, չսպասելով այդ ծրագիր մշակմանը, կուսակցության տարածքային ստորաբաժանումներն իրենք պետք է փորձեն հասկանալ իրենց բնակավայրերի խնդիրները, առաջարկեն լուծումներ: Առանձին խնդիր է համայնքների հանրապետական ղեկավարների և կուսակցության տարածքային ստորաբաժանումների համագործակցության արդյունավետության ապահովումը: Խորհրդարանական ընտրություններում եղան համայնքներ, որտեղ համայնքի ղեկավարը հանրապետական էր, սակայն մենք ստացանք քիչ ձայներ: Ակնհայտ է, որ կամ վատ են համագործակցել տարածքային շտաբը /տարածքային կազմակերպությունն/ ու համայնքի ղեկավարը, կամ, որոշ դեպքերում, համայնքի ղեկավարի անդամակցությունը կուսակցությանը ձևական է: Այդ առումով շատ կարևոր է, որ տեղական ինքնակառավարման ընտրություններում թեկնածուներ առաջադրելիս կամ պաշտպանելիս հաշվի առնվի, թե թեկնածուն ինչ ակտիվություն է ունեցել տարածքային ստորաբաժանումների ընթացիկ գործունեության շրջանակներում:

Իհարկե, հաշվետու ժամանակահատվածում մենք հաջողություններ ենք ունեցել նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում: Եթե 2005թ. վերջին մենք ունեինք 427 համայնքների ղեկավար հանրապետականներ, ապա այսօր դրանց թիվը 552 է, այսինքն Հայաստանի Հանրապետության 925 համայնքների 60 տոկոսը: Եթե սրան ավելացնենք նաև այն հանգամանքը, որ այդ համայնքների շարքում են գրեթե բոլոր խոշոր համայնքները, ապա պարզ կդառնա, որ մենք լուրջ անելիքներ ունենք այդ հսկայական ներուժը լիարժեքորեն օգտագործելու համար:

Կուսակցության գործունեության արդյունավետության մեծացման տեսակետից կարևոր նշանակություն ունի ոչ միայն պրակտիկ աշխատանքը, այլև այդ գործունեությունը կարգավորող գլխավոր իրավական փաստաթղթի՝ կանոնադրության համապատասխանությունը ժամանակի պահանջներին: Ահա թե ինչու համագումարի քննարկմանն է ներկայացվել կուսակցության կանոնադրությունում առաջարկվող փոփոխությունների նախագիծը, որը մշակվել է կուսակցության գործադիր մարմնում, ապա քննարկում անցել խորհրդում և կուսակցական կառույցներում: Առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, որ ընդամենը մեկ տարի առաջ տեղի ունեցած փոփոխություններից հետո կանոնադրությունը կրկին փոխվում է, սակայն, կարծում եմ, նոր փոփոխությունների իրականացումը հիմնավոր է և նպատակահարմար: Կուսակցությունը կենդանի, զարգացող օրգանիզմ է և այդ զարգացման յուրաքանչյուր

շրջան պահանջում է նոր մոտեցումներ, նոր լուծումներ, որոնք կարող են ստանալ որոշիչ նշանակություն՝ հատկապես շրջադարձային փուլերում: Այդ տեսակետից առաջնային է ոչ թե ժամանակային գործոնը, այլ իրավիճակի առանձնահատկությունը: Մեկ տարի առաջ կուսակցությունը նախապատրաստվում էր խորհրդարանական ընտրությունների, մեր երկրի քաղաքական կյանքում ուներ այլ դերակատարություն և փոփոխություններն էլ բխում էին այդ իրողություններից: Այն ժամանակ իրականացված կանոնադրական փոփոխությունների արդյունավետության փայլուն ապացույցը դարձան մայիսյան ընտրությունների արդյունքները: Այսօր մենք ունենք նոր իրավիճակ, նոր է սկսվել հերթական խորհրդարանական շրջանը՝ կուսակցության համար աննախադեպ կարգավիճակով և պատասխանատվությամբ, էապես ավելացել է կուսակցության անդամների թիվը, կուսակցությունը գնում է նախագահական ընտրությունների և առաջարկվում են նոր կանոնադրական փոփոխությունները, որոնք բխում են այդ կարգավիճակից և պետք է դառնան կուսակցության մարտավարական և ռազմավարական քայլերի արդյունավետությունն ապահովող իրավական նորմերը, որոնք մանրամասնորեն կներկայացվեն քիչ հետո, առանձին ելույթով:

Խորհրդարանական ընտրությունները մեզ համար առանձնահատուկ էին նաև այն պատճառով, որ հետխորհրդային Հայաստանի պատմության մեջ այդ ընտրությունները ճանաչվեցին լավագույնը և առաջին անգամ՝ միջազգային չափանիշներին համապատասխանող: Այս հանգամանքը առանձնահատուկ նշանակություն ունի թե արտաքին, և թե ներքին քաղաքական զարգացումների տեսակետից: Մենք, որպես այդպիսի ընտրությունների արդյունքում խորհրդարանում լիակատար մեծամասնություն ստացած քաղաքական ուժ՝ պետք է բարձր գնահատենք երկրում ժողովրդավարության զարգացման տեսակետից այս կարևոր ձեռքբերումը և ամեն ինչ անենք, որ առաջիկա նախագահական ընտրությունները զերծ լինեն այս անգամ դրսևորված առանձին թերություններից և հաստատեն, որ ժողովրդավարական չափանիշներին բավարարող ընտրությունների անցկացումը Հայաստանում դառնում է ավանդույթ: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ առաջիկա ընտրությունները լինեն ազնիվ և քաղաքակիրթ քաղաքական պայքարի օրինակ: Գաղափարների ու ծրագրերի պայքարի օրինակ: Ցավոք, արդեն իսկ նկատելի են դրսևորումներ, որոնք չեն տեղավորվում այդ շրջագծում:

Ամենացավալին այն է, առավել հաճախ նման քայլերի են դիմում նրանք, ովքեր սիրում են վերամբարձ դատողություններ անել ազնիվ և արդար քաղաքական պայքարի մասին: Խորհրդարանական ընտրություններից առաջ չարագուշակ հայտարարություններ էին արվում, որ ապագա խորհրդարանը բաղկացած կլինի բազմաթիվ մանր բեկորներից ու կթաղվի ներքին հակասությունների մեջ: Երբ հանրապետականները ստացան Ազգային ժողովի ձայների կեսը, ոմանք տագնապ հայտարարեցին՝ իբր ձևավորվում է միակուսակցական խարհրդարան, ձև անելով կամ չիմանալով, որ բացարձակ անհեթեթություն է հինգ խմբակցություն ունեցող խորհրդարանի վերաբերյալ նման որակումը: Անհմաստ աղմուկը հազիվ դադարեց՝ մի շարք եվրոպական երկրների ընտրություններում նմանատիպ արդյունքներ գրանցվելուց հետո, հիմա էլ փորձում են հասարակությանը ահաբեկել, որ առաջիկա նախագահական ընտրություններում Հանրապետականի թեկնածուի հաղթանակի դեպքում կխախտվի հակակշիռների ու զսպումների համակարգը, իբր մոռանալով, որ այն սահմանվում է ոչ թե կուսակցությունների, այլ իշխանության թևերի միջև: Պատմությունը մշտապես ապացուցել է, որ երկրի զարգացման համար ներդաշնակ գործող, արդյունավետ համագործակցող պետական կառավարման մարմիններն այլընտրանք չունեն: Հակառակը ներքին լարվածությունների, հասարակական կյանքի բարելավման հաշվին դրանց հաղթահարման համար անհմաստ քաղաքական առևտրի, անկայունության, ցնցումների ու քաոսի պտուղներն են, որոնց դառնությունը շարունակում են ճաշակել մի շարք ԱՊՀ երկրներ:

Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ նենգափոխումները այս նախընտրական շրջանում մեր որոշ ընդդիմախոսների համար պայքարի միակ հնարավորությունն են: Այդ ենթատեքստում չեմ կարող չանդրադառնալ Լևոն Տեր-Պետրոսյանի հայտնի ելույթին, որում ներկայացված են դատողություններ երեք հարցի վերաբերյալ. ներքին սոցիալ-քաղաքական իրավիճակ, հոկտեմբերի 27–ի ողբերգություն, Ղարաբաղյան խնդիր: Ելույթի ուսուցողական տոնին, առարկություններ չհանդուրժող որակումներին ու պիտակավորումներին, ինչպես նաև սարսափազդու ներկայի և անհուսալի ապագայի նկարագրությունների մասին չարժե խոսել, քանզի մեր հասարակությունը հոգնել է թեկուզ և ճարտար ձևակերպված, սակայն անառարկա խոսքից: Եթե ոմանք հույսը դրել են այն բանի վրա, որ հասարակությունը կարճ հիշողություն ունի, ապա կարծում եմ կարճ ժամանակ անց փայլուն հնարավորություն կունենա համոզվելու, որ այս անգամ էլ են սխալվել: Կանդրադառնամ միայն այդ երեք հարցերի վերաբերյալ ներկայացված դատողությունների հիմնավորման համար օգտագործված մի քանի «փաստերի» ու «փաստարկների», ցույց տալու համար, որ դրանք էլ չեն կարող քողարկել հնչեցված որակումների ու մեղադրանքների կեղծ էությունը:

Հոկտեմբերի 27–ի մասին: Առիթ եղել է ասելու, որ նման ողբերգությունների քաղաքական շահարկումը բարոյական չէ: Իսկ ութ տարի ոչինչ չասելուց հետո, միայն ընտրություններից երեք-չորս ամիս առաջ նման հայտարարություններ անելը ակնհայտորեն ելույթի հուզական հենքն ու «արատավոր վարչախումբ» ձևավորելու վերաբերյալ առաջարկվող վարկածի հիմքն ապահովելու նպատակ է հետապնդում: Սակայն այդ վարկածը անմիջապես փլվում է, երբ Տեր-Պետրոսյանը փորձում է այն ամրացնել աշխատանքից ազատված հանրապետական և ՀԺԿ-ական տասնչորս «նախարարների ու պաշտոնյաների» անունների թվարկումով: Անգամ կարևոր չէ, որ այդ մարդիկ աշխատանքից ազատվել են տարբեր ժամանակներում և տարբեր հանգամանքների արդյունքում: Սակայն մի՞թե կարելի է տասնչորս մարդու անուն թվարկել ու տասնմեկի պարագայում սխալվել: Ինչու՞ է Լևոն Տեր Պետրոսյանը տասնմեկ մարդու վերագրում ՀՀԿ-ին կամ ՀԺԿ-ին: Այդ ե՞րբ են Լևոն Բարխուդարյանը, Արմեն Եղիազարյանը, Շահեն Կարամանուկյանը, Լեոնիդ Հակոբյանը, Էդուարդ Սիմոնյանցը, Անդրանիկ Քոչարյանը և մյուսները եղել ՀՀԿ կամ ՀԺԿ անդամ: Նման բան հայտարարելու համար կամ պետք է մոռացած լինել ամեն ինչ կամ կեղծել: Եթե շատերին հայտնի այդ մարդկանց անունները թվարկելիս կարելի է նման աղաղակող սխալներ թույլ տալ, ապա ինչպես կարող են հավատ ներշնչել մյուս ենթադրյալ հիմնավորումները: Որևէ քննադատության չեն դիմանում նաև ելույթի սոցիալ-տնտեսական խնդիրներին վերաբերող հատվածի այսպես կոչված հիմնավորումները: Դատեք ինքներդ: Առաջին նախագահն ասում է, որ մեր քաղաքացիները արտերկրից ստանում են մոտ 2 միլիարդ դոլարի դրամական փոխանցումներ և դրանց «80 տոկոսը ծախսվում է ներմուծվող ապրանքների սպառման վրա», այսինքն, ըստ Լևոն Տեր-Պետրոսյանի, 2 մլրդ դոլարի դրամական փոխանցումներից 1մլրդ 600 միլիոն դոլարը մեր քաղաքացիները ծախսում են ներմուծվող ապրանքների սպառման վրա: Վերջին տարվա ընթացքում ներմուծումը կազմել է 2.2 մլրդ դոլար: Ներմուծված 2.2 մլրդ դոլարի ապրանքներից 312 միլիոնը բաժին է ընկնում թանկարժեք քարերին և մետաղներին, 305 միլիոնը՝ մեքենաներին ու մեխանիզմներին, 366 միլիոնը՝ համքահումքային արտադրանքին, 197 միլիոնը՝ վերգետնյա և օդային տրանսպորտային միջոցներին: Ամենամեծ ցանկության դեպքում էլ հնարավոր չէ 1.2 մլրդ դոլար արժողության այս ապրանքները դասել սպառողական ապրանքների շարքին: Ներմուծվող մյուս ապրանքների մասին անգամ չխոսելով էլ ակնհայտ է, որ նախկին նախագահի թվաբանությունը խիստ կաղում է և չի կարող հիմք լինել այն հետևության համար, թե Հայաստանի կյանքում տեղի ունեցած բարելավումները արտաքին դրամական փոխանցումների հետևանք են: Իհարկե, կարելի էր գոնե մի շարք

միջազգային կազմակերպությունների ու վերլուծական կենտրոնների գնահատումներին ծանոթանալ, որոնք վկայում են, որ չնայած դեռևս չլուծված մի շարք խնդիրներին, Հայաստանը վերջին տաս տարիներին ունեցել է էական առաջընթաց ոչ միայն իր հարևանների, այլև բազմաթիվ այլ երկրների համեմատ: Սակայն, պարզվում է, ըստ Լևոն Տեր-Պետրոսյանի, դրանք էլ մի բարի պտուղ չեն. իրենց պաշտոնական զեկույցներում ամբողջ աշխարհին ներկայացնում են Հայաստանի իշխանությունների մատուցած պատկերը, սակայն գաղտնի փաստաթղթեր են պատրաստում ոմանց մխիթարելու համար:

Մեկ այլ ցնցող «փաստ»՝ Լևոն Տեր-Պետրոսյանի ներկայացմամբ: Իր ելույթում նա անկախության առաջին տասնամյակի համար բնորոշ է համարում ազատության, հպարտության, ոգևորության զգացումը: Հավանաբար 1996-ի սեպտեմբերին ցուցարարներն իրենց հպարտությունն ու ոգևորությունն էին արտահայտում իշխանությունների նկատմամբ և վերջիններս էլ նրանց ջերմորեն ողջունելու համար փողոց դուրս բերեցին տանկերը:

Ղարաբաղյան խնդրի վերաբերյալ: Դեռ ոչինչ, որ առաջին նախագահը լուծմանն ուղղված որևէ քայլ չի առաջարկում՝ հպանցիկ նշելով, որ մնում է հարցի միայն մեկ լուծում՝ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի իրացումը: Ոչինչ, որ չի նշում, որ տաս տարի առաջ ոչ Մինսկի խմբի համանախագահները, ոչ միջազգային կազմակերպություններն անգամ լսել չէին ուզում ինքնորոշման իրավունքի մասին, իսկ վերջին երկու-երեք տարիներին այն դարձել է կարգավորման հիմնական սկզբունքներից մեկը և ներառվել է միջազգային կազմակերպությունների մի քանի փաստաթղթերում: Փոխարենը քամահրանքով խոսում է «Լեռնային Ղարաբաղում անցկացվելիք հանրաքվեի կամ ժողովրդական հարցման մասին»:

Անգամ ոչինչ, որ «վիճակը համարյա անհուսալի է» համարում՝ դա պայմանավորելով Ադրբեջանի դիրքորոշման կարծրացմամբ, կարծես տաս տարի առաջ Ադրբեջանը պատրաստվում էր ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը, կամ մոռացել է, թե այն ժամանակ ինչպիսին էր մարդկային, ռազմական և տնտեսական կարողությունների հարաբերակցությունը հայկական և ադրբեջանական կողմերի միջև, ու փորձում է որոշ համեմատություններով համոզել, որ խնդիրն ապագա չունի: Բայց Լևոն Տեր-Պետրոսյանի գլուխգործոցը հետևյալ եզրահանգումն է. «Արցախյան պատերազմում հայկական կողմի ձեռքբերած հաջողությունները մեծապես պայմանավորված էին իշխանության՝ Մութալիբովից էլչիբեյին, էլչիբեյից Ալիևին անցման շրջանների քաոսային ու գրեթե անիշխանական իրավիճակներով»: Հիրավի, չարությունն ու ատելությունը կործանարար են: Դժվար էր պատկերացնել, որ արցախյան գոյամարտում մեր ժողովրդի անասելի զրկանքների գնով ձեռք բերված հաջողությունների ու հաղթանակը կերտած հազարավոր նվիրյալների հիշատակի նկատմամբ այսպիսի արհամարհանք կարող է դրսևորել նա, ով եղել է երկրի առաջին նախագահը և հավակնում է առաջնորդելու այդ նույն ժողովրդին:

Խնայելով ձեր ժամանակն ու նյարդերը՝ չեմ անդրադառնա մյուս «փաստերին» ու «փաստարկներին», որոնք ավելի հավաստի չեն, քան նշվածները: Ինչ վերաբերում է ավգյան ախոռները մաքրելուն, ապա ուզում եմ հիշեցնել, որ մեր ժողովուրդը դա արդեն արել է 1998-ին՝ հիմնավորապես և, համոզված եմ, անդառնալիորեն:

Մենք վստահ ենք, որ առաջիկա նախագահական ընտրությունները ոչ թե մեր երկիրը կգլորեն տաս տարի ետ, այլ նոր դուռ կբացեն երկրի զորացման ու մեր քաղաքացիների համար արժանապատիվ կյանք ապահովելու համար:

Մենք հիանալի հնարավորություններ ունենք խորհրդարանական ընտրություններում կուսակցության շարունակական հաջողությունների համապատկերում ակնկալելու միանգամայն տրամաբանական և վստահ հաղթանակ

առաջիկա նախագահական ընտրություններում ևս՝ որպես մի նոր հնարավորություն՝ կերտելու համար մեր երազած Հայաստանը:

Տ.Թորոսյանը տեղեկացրեց, որ կուսակցության խորհրդի, նաև գործադիր մարմնի վերջին նիստում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարիներ շարունակ ՀՀԿ անդամ չլինելով, պրն Ս.Սարգսյանը ակտիվորեն համագործակցել է ՀՀԿ-ի հետ, 2003թ. ընտրություններին մասնակցել է ՀՀԿ համամասնական ցուցակով, որտեղ 2-րդ համարն էր, 2007թ. ընտրություններին՝ արդեն որպես կուսակցության նախագահի պաշտոնակատար, պրն Սարգսյանը գլխավորում էր ՀՀԿ համամասնական ցուցակը, և ընտրություններում մեր հաջողության մեջ ունեցել է առանցքային դերակատարություն, ավելին, հաշվի առնելով կուսակցության ավանդույթները, պրն Ս.Սարգսյանի դերակատարությունը մեր նորանկախ պետության գործունեության ողջ ժամանակահատվածում, ծառայությունները պետությանը, մեր ժողովրդին, կուսակիցների վստահությունը իր նկատմամբ, կուսակցության խորհուրդը և գործադիր մարմինը առաջարկել են, որ համագումարում առաջադրվի Սերժ Սարգսյանի թեկնածությունը՝ որպես Հայաստանի Հանրապետական կուսակցության նախագահ:

ՀՀԿ կանոնադրության 12-րդ կետի համաձայն ՀՀԿ խորհրդի անդամների թիվը որոշում է կուսակցության համագումարը: Նոյեմբերի 8-ին տեղի ունեցած ՀՀԿ խորհրդի նիստում որոշվեց առաջարկել համագումարին կուսակցության խորհրդի կազմում ունենալ 100 անդամ և ներկայացվեց խորհրդի կազմը:

Տ.Թորոսյանը նշեց, որ ՀՀԿ կանոնադրության համաձայն առաջարկվում է ընտրել գործադիր մարմին, որը հանդիսանում է կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմին: ՀՀԿ նախագահը միաժամանակ հանդիսանում է գործադիր մարմնի ղեկավար:

Առաջարկվեց կուսակցության գործադիր մարմնի կազմում ունենալ 13 անդամ և ներկայացվեց գործադիր մարմնի կազմը:

ՀՀԿ նախագահի ընտրության համար անցկացված փակ քվեարկության արդյունքները.

641 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

ՀՀԿ խորհրդի կազմի ընտրության համար անցկացված փակ քվեարկության արդյունքները.

Հ Հ Կ Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ

Հ/Հ	Ազգանուն	Անուն	Հայրանուն	Նշումներ
1.	Սարգսյան	Սերժ	Ազատի	641
2.	Թորոսյան	Տիգրան	Սուրիկի	638
3.	Զոհրաբյան	Ռազմիկ	Արտավազդի	636
4.	Լալայան	Մուշեղ	Արծրունու	636
5.	Սահակյան	Գալուստ	Գրիգորի	637
6.	Աբրահամյան	Հովիկ	Արգամի	637
7.	Աղաբաբյան	Աշոտ	Սերյոժայի	635
8.	Այվազյան	Վարդան	Սուրենի	635
9.	Ավետիսյան	Արա	Սերգեյի	634
10.	Աշոտյան	Արմեն	Գևորգի	635
11.	Ավագյան	Կարեն	Կառլենի	634
12.	Ալեքսանյան	Լեռնիկ	Ռաֆիկի	634

13.	Արսենյան	Աշոտ	Եղիշեի	633
14.	Աբրահամյան	Հենրիկ	Արգամի	634
15.	Արզաքանցյան	Տիգրան	Գրիշայի	633
16.	Ասրյան	Խաչիկ	Մայիսի	633
17.	Բաղալյան	Գառնիկ	Ժորայի	635
18.	Բեգլարյան	Գագիկ	Բեգլարի	635
19.	Բաղեյան	Մանվել	Հենրիկի	634
20.	Բաղալյան	Վլադիմիր	Մերուժանի	634
21.	Գագյան	Գագիկ	Սիմոնի	634
22.	Գաբրիելյան	Արտաշես	Կարապետի	634
23.	Գասպարյան	Մելիք	Ապրեսի	633
24.	Գրիգորյան	Արտակ	Աշոտի	633
25.	Գրիգորյան	Ռաֆիկ	Խորենի	633
26.	Գրիգորյան	Հրանտ	Մերուժանի	632
27.	Գրիգորյան	Աղվան	Երվանդի	634
28.	Գևորգյան	Նահապետ	Բագրատի	633
29.	Դանիելյան	Արմեն	Սերյոժայի	632
30.	Դավթյան	Արտակ	Լյուդվիկի	632
31.	Դումանյան	Դերենիկ	Հրանտի	633
32.	Զախարյան	Երվանդ	Վազգենի	635
33.	Զաղոյան	Դավիթ	Մնացականի	634
34.	Զաքարյան	Արտակ	Բորիսի	633
35.	Թադևոսյան	Ռուբեն	Հրաչիկի	635
36.	Թարվերդյան	Սամվել	Պողոսի	633
37.	Թոփուզյան	Մանուկ	Լևոնի	634
38.	Խաչատրյան	Սուրեն	Սերգեյի	634
39.	Խաչատրյան	Գագիկ	Մկրտիչի	634
40.	Խաչիկյան	Վազգեն	Յուրիկի	634
41.	Խաչատրյան	Վարդան	Ժորայի	634
42.	Կարապետյան	Կարեն	Սարգիսի	636
43.	Կարախանյան	Վազգեն	Ղուկասի	635
44.	Կիրակոսյան	Կարինե	Գեղամի	635
45.	Հակոբյան	Արա	Լևոնի	634
46.	Հակոբյան	Հակոբ	Ռաֆիկի	634
47.	Հակոբյան	Գևորգ	Սեյրանի	634
48.	Հակոբյան	Հրանուշ	Հրանտի	633
49.	Հակոբյան	Վահե	Մաքսիմի	632
50.	Հայրապետյան	Ռուբեն	Ռաֆիկի	635
51.	Հովհաննիսյան	Սարգիս	Բենիկի	633
52.	Հարությունյան	Համլետ	Միքայելի	635
53.	Հարությունյան	Դավիթ	Էդոնիսի	635
54.	Հարությունյան	Արամ	Խաչիկի	634
55.	Հովսեփյան	Հովհաննես	Աշոտի	634
56.	Ղուլարյան	Արմեն	Հրանտի	634
57.	Ղուկասյան	Սուրեն	Ալբերտի	634
58.	Ղուկասյան	Վարդան	Կոլյայի	633
59.	Ղուկասյան	Արեգ	Արշավիրի	635
60.	Ղուկասյան	Արտյոմ	Գեորգիի	633
61.	Ճշմարիտյան	Կարեն	Յուրիկի	634
62.	Մամիկոնյան	Վահան	Սասնիկի	635
63.	Մալխասյան	Արարատ	Ցոլակի	634
64.	Մարգարյան	Տարոն	Անդրանիկի	636
65.	Մարտիրոսյան	Ռազմիկ	Մարտիրոսի	633
66.	Մանուկյան	Սերգեյ	Լևոնի	635
67.	Մանուկյան	Խաչիկ	Վաղինակի	633
68.	Մինասյան	Գագիկ	Ենգիբարի	635
69.	Մինասյան	Մկրտիչ	Հակոբի	635
70.	Միքայելյան	Սասուն	Մեխակի	634
71.	Մելիքյան	Գագիկ	Վաղինակի	635
72.	Մովսիսյան	Արմեն	Խիկարի	633
73.	Մխիթարյան	Արմեն	Աշոտի	634
74.	Մկրտչյան	Մկրտիչ /Սերժ/	Էմիլի	633
75.	Մկրտչյան	Վարազդատ	Վաղինակի	634
76.	Մովսիսյան	Առաքել	Աբրահամի	633
77.	Նաղդալյան	Հերմինե	Միքայելի	635
78.	Նիկոյան	Սամվել	Պարգևի	636
79.	Շահգալդյան	Կովալենկո	Սուրենի	635

80.	Շահինյան	Հովհաննես	Երջանիկի	633
81.	Շարմազանով	Էդուարդ	Հովսեփի	634
82.	Պետրոսյան	Ռաֆիկ	Գարեգինի	634
83.	Պետրոսյան	Դավիթ	Ռաֆիկի	634
84.	Պետրոսյան	Ալեքսան	Մակարի	633
85.	Պուրտոյան	Արմեն	Յուրիկի	633
86.	Պողոսյան	Սուրիկ	Սիրակի	634
87.	Սահակյան	Արման	Գալուստի	635
88.	Սարգսյան	Ալիկ	Սարգսի	635
89.	Սարգսյան	Լևոն	Հրաչյայի	635
90.	Սարգսյան	Մարտին	Գրիգորի	635
91.	Սարգսյան	Ալեքսանդր	Ազատի	635
92.	Սարգսյան	Սամվել	Ֆրունզեի	634
93.	Սաղոյան	Ռուբեն	Ալֆրեդի	634
94.	Սարիբեկյան	Կարեն	Բաղիշի	633
95.	Սիմոնյան	Արամ	Հրաչիկի	634
96.	Սեդրակյան	Միեր	Դավիթի	635
97.	Ստեփանյան	Ռազմիկ	Անուշավանի	635
98.	Փամբուկյան	Հարություն	Կարոյի	635
99.	Քոչարյան	Արամ	Վլադիմիրի	634
100.	Քոթանջյան	Արայիկ	Յուրջանի	634

ՀՀԿ գործադիր մարմին ընտրվեց փակ քվեարկությամբ հետևյալ կազմով.

Հ/Հ	ազգանուն	անուն	հայրանուն	կողմ	դեմ
1.	Սարգսյան	Սերժ	Ազատի	641	-
2.	Թորոսյան	Տիգրան	Սուրիկի	638	3
3.	Աբրահամյան	Հովիկ	Արգամի	637	4
4.	Զոհրաբյան	Ռազմիկ	Արտավազդի	637	4
5.	Սահակյան	Գալուստ	Գրիգորի	637	4
6.	Լալայան	Մուշեղ	Արծրունու	636	5
7.	Կարապետյան	Կարեն	Սարգսի	636	5
8.	Փամբուկյան	Հարություն	Կարոյի	636	5
9.	Թադևոսյան	Ռուբեն	Հրաչիկի	636	5
10.	Հակոբյան	Հրանուշ	Հրանտի	636	5
11.	Հարությունյան	Դավիթ	Էդոնիսի	636	5
12.	Դումանյան	Դերենիկ	Հրանտի	636	5
13.	Մինասյան	Գագիկ	Ենգիբարի	636	5

Հայաստանի Հանրապետական կուսակցության նախագահ ընտրվեց Սերժ Սարգսյանը:

Գործադիր մարմնի անդամներ ընտրվեցին բոլոր 13 թեկնածուները, խորհրդի անդամներ ընտրվեցին բոլոր 100 թեկնածուները:

Շնորհակալական խոսքով հանդես եկավ Հայաստանի Հանրապետական Կուսակցության նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանը.

Հարգելի կուսակիցներ,

Շնորհակալ եմ Հայաստանի Հանրապետական Կուսակցության նախագահի պաշտոնում ինձ ընտրելու համար: Սա բարձր պատասխանատվություն է: Կուսակցության նախորդ երեք նախագահները՝ Աշոտ Նավասարդյանը, Վազգեն Սարգսյանը և Անդրանիկ Մարգարյանը եղել են մեր նորագույն պատմության մեջ կարևորագույն դեր ստանձնած քաղաքական գործիչներ և նրանցից հետո կուսակցությունը գլխավորելը իսկապես պարտավորեցնող է: Հավաստիացնում եմ բոլորիդ, որ ամեն ինչ անելու եմ, որպեսզի ՀՀԿ-ի դերակատարությունը հասարակական-քաղաքական կյանքում օրըստօրե մեծանա: Շնորհակալ եմ:

Հայտարարվեց կարճատև ընդմիջում, որի ընթացքում տեղի ունեցավ ՀՀԿ նորընտիր խորհրդի առաջին նիստը:

Օրակարգում՝ երեք հարց.

1. Կուսակցության նախագահի տեղակալների ընտրություն,
2. Կուսակցության հանձնաժողովների նախագահների ընտրություն,
3. Հայաստանի Հանրապետության նախագահի թեկնածուի առաջադրում:

Ընդմիջումից հետո Տ.Թորոսյանը հայտարարեց, որ նորընտիր խորհուրդը հաստատել է ՀՀԿ նախագահի կողմից առաջադրված ՀՀԿ նախագահի չորս տեղակալի և հինգ հանձնաժողովի նախագահների թեկնածությունները՝

Տիգրան Թորոսյան – ՀՀԿ նախագահի տեղակալ քաղաքական գծով.
Ռազմիկ Զոհրաբյան – ՀՀԿ նախագահի տեղակալ կազմակերպչական գծով.
Մուշեղ Լալայան - ՀՀԿ նախագահի տեղակալ գաղափարական գծով
Գալուստ Սահակյան – ՀՀԿ նախագահի տեղակալ ընդհանուր գծով

Քաղաքական հանձնաժողով- Տիգրան Թորոսյան
Գաղափարա-քարոզչական հանձնաժողով - Մուշեղ Լալայան
Կազմակերպչական հանձնաժողով - Ռուբեն Թադևոսյան
Տնտեսագիտական հանձնաժողով – Կարեն Կարապետյան
Գործարարության աջակցության հանձնաժողով – Հարություն Փամբուկյան

Տ.Թորոսյանը հայտարարեց, որ 2007թ նոյեմբերի 8-ին կայացած ՀՀԿ խորհրդի և գործադիր մարմնի նիստերում առաջարկվել էր Հայաստանի Հանրապետության նախագահի թեկնածուի պաշտոնում առաջադրել Սերժ Սարգսյանի թեկնածությունը:

Կուսակցության նորընտիր խորհուրդը նույնպես քննարկեց այս հարցը և հաշվի առնելով կուսակցության նախագահի մատուցած ծառայությունները հայրենիքին 16-ամյա պետականության ընթացքում, բազմաթիվ բարձրաստիճան պատասխանատու պաշտոններում աշխատանքը և նվիրումը, կուսակցության կյանքում, գործունեության մեջ ունեցած առանցքային դերակատարությունը, հաշվի առնելով մեր երկրի ապագա մարտահրավերները և կուսակցության աշխատանքի և գաղափարախոսության շարունակականության ապահովման անհրաժեշտությունը, ՀՀԿ նորընտիր խորհուրդը նույնպես առաջարկում է համագումարին ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանին առաջադրել Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրություններում՝ որպես թեկնածու:

Բաց քվեարկության արդյունքում Հայաստանի Հանրապետական կուսակցության նախագահ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ միաձայն առաջադրվեց Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրություններում՝ որպես թեկնածու:

ՀՀԿ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵԼՈՒՅԹԸ

Հարգելի տիկնայք եւ պարոնայք,
Սիրելի հանրապետականներ,
Հարգարժան հյուրեր

Առաջին հերթին ուզում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել ձեզ հանրապետության նախագահի ընտրություններում իմ թեկնածությունն առաջադրելու համար:

Մայիսյան խորհրդարանական ընտրություններից հետո ստեղծվել է քաղաքական նոր իրավիճակ եւ ընտրությունների արդյունքում էապես փոխվել է մեր կուսակցության կարգավիճակը: Խորհրդարանում այլեւս մենք ունենք մեծամասնություն. սա առաջին հերթին Հանրապետական կուսակցության պատասխանատվությունն է մեր ժողովրդի եւ պետության ապագայի համար:

Դա նշանակում է, որ մեր կուսակցության նախընտրական ծրագիրը հավանության է արժանացել ժողովրդի կողմից: Եվ առաջ քաշված նպատակներին ու խնդիրներին հասնելու համար անհրաժեշտ է ապահովել քաղաքական եւ տնտեսական կայունություն ու կանխատեսելիություն:

Նախագահական ընտրությունները ստեղծում են այդպիսի բացառիկ հնարավորություն առաջիկա հինգ տարիների համար, ինչը ենթադրում է.

-ամբողջական պատասխանատվության ստանձնում,

-օրենսդիր եւ գործադիր իշխանությունների ներդաշնակ համագործակցության ապահովում,

-քաղաքական անիմաստ հակամարտություններից խուսափում,

-բեկումնային եւ հավակնոտ ծրագրերի իրականացման պատմական հնարավորություն:

Հարգելի բարեկամներ

Ժամանակակից աշխարհը լի է լրջագույն մարտահրավերներով.

-աշխարհաքաղաքական հարթությում ձեւավորվում են նոր կենտրոններ,

-խարխլվում է ռազմական հավասարակշռվածությունը, տարածվում են ահաբեկչական շարժումները,

-տնտեսական մրցակցությունը սաստկանում է,

-հարուստ եւ աղքատ երկրների միջեւ ճեղքվածքը շարունակում է խորանալ:

Համաշխարհային քաղաքական, ռազմական ու տնտեսական անհամամասնությունները, բնական ռեսուրսների համար խստացող պայքարը կարող են մեզ համար շատ ավելի ցավոտ հետեւանքներ ունենալ, եթե մենք պատրաստ չլինենք իրադարձությունների՝ վատագույն սցենարներով ծավալմանը: Համաշխարհային շուկաներում վառելիքի եւ սննդամթերքի գների աճը արդեն բացասական հետեւանքներ է ունեցել յուրաքանչյուր հայ ընտանիքի համար:

Մենք ապրում ենք բազմաթիվ հակասություններով եւ վտանգներով լի տարածաշրջանում: Գրեթե բոլոր հարեւան պետություններում առկա են մեզ մտահոգող իրադարձությունների պարբերական զարգացումներ.

-չկարգավորված ազգամիջյան եւ քաղաքական խնդիրները Վրաստանում,
-ամերիկա-իրանական լարված հարաբերությունները,
-Թուրքիայի ռազմատենչ տրամադրությունները եւ պահվածքը,
-Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման ձգձգումը մեզանից պահանջում են լրացուցիչ ջանքեր եւ ռեսուրսներ:

Ներհանրապետական մարտահրավերների մասին կցանկանայի ասել հետեւյալը. նախորդ՝ բարդ եւ հակասական 15 տարիների ընթացքում մեզ հաջողվեց կառուցել ժողովրդավարական հիմնարար սկզբունքների վրա խարսխված անկախ պետականություն: Այսօրվա խնդիրն է պետականության ամրապնդումը, արդարության, համերաշխության եւ օրինականության մթնոլորտի ձեւավորումը:

Անցնելով դժվարությունների եւ փորձությունների միջով մեկ անգամ եւս համոզվեցինք, որ մեր հաջողությունների միակ գրավականը մեր ժողովուրդն է:

Թվարկված մարտահրավերների հարթությունից դուրս բերված խնդիրները ուրվագծում են մեր զարգացման հիմքերը. այն է՝ ուժեղ պետություն, որ համայն հայությանն է եւ ուժեղ աշխարհասփյուռ հայություն, որի Մայր հայրենիքը Հայաստանն է: Մարտահրավերներին պատասխանելու մեր գլխավոր հնարավորությունը համայն հայության ներուժն է:

Հանրապետության ապագա նախագահը պետք է իր ջանքերն ուղղի արդիականացված տնտեսական, գիտական, մշակութային եւ քաղաքական համագործակցության կենտրոնների ձեւավորմանը, որոնք կբացահայտեն եւ կիրացնեն վերոնշյալ ներուժը:

Դա է լինելու մոտակա տարիների մեր անելիքների առանցքը եւ համաշխարհային ու տարածաշրջանային մրցակցային առավելությունը:

Հարգելի բարեկամներ
Ազատական եւ մրցակցության վրա հիմնված տնտեսության պարագայում էական նշանակություն ունի միջազգային եւ մասնավորապես, եվրոպական ինտեգրացումը: Այն ունի երեք հարթություն:

Առաջին, քաղաքացիների եւ տնտեսվարող սուբյեկտների համար միջազգային լավագույն փորձի եւ ստանդարտների ներդրում, ինչը մի կողմից բարձրացնում է նրանց գործունեության արդյունավետությունը, մյուս կողմից խթանում հարաբերությունները արտասահմանյան գործընկերների հետ, այդ թվում՝ ստեղծելով մեխանիզմներ արտերկրում նրանց շահերի պաշտպանության համար:

Երկրորդ, միջպետական երկկողմ հարաբերությունների ընդլայնում եւ խորացում, ինչը պետք է հեշտացնի ապրանքաշրջանառությունը, ծառայությունների մատուցումը, մշակութային համագործակցությունը:

Հայ-ռուսական հարաբերությունները այս հարթության լավագույն դրսեւորումներից մեկն է:

Երրորդը միջազգային կառույցներին անդամակցությունն է եւ համագործակցության խորացումը՝ ինտեգրման միջավայրում երկրի քաղաքական, տնտեսական եւ այլ բնույթի շահերի պաշտպանության նպատակով: Համոզված եմ՝ մեր արտաքին քաղաքականության կարեւոր սկզբունքը, որը բխում է մեր երկրի առջեւ ծառացած

մարտահրավերներից՝ երկկողմ եւ բազմակողմ հարաբերությունների ներդաշնակ համադրումն է:

Անցած տարիների ձեռք բերած փորձն ու հաջողությունները մեզ թույլ են տալիս պնդել, որ Հայաստանը չի ենթարկվելու Թուրքիայի եւ Ադրբեջանի շանտաժին եւ շարունակելու է հավատարիմ մնալ առանց նախապայմանների միջպետական հարաբերություններ հաստատելու իր մոտեցմանը՝ համարելով, որ դա միակ ճանապարհն է ոչ միայն փոխշահավետ գործակցության, այլեւ առկա խնդիրների լուծման համար:

Այս հիմքերի վրա, արցախյան հիմնախնդիրը մնալու է նախագահի գործողությունների կիզակետում: Ինչպես հիշում եք, Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման հարցի շուրջ մեր դիրքորոշումը խարսխված է եղել հետեւյալ սկզբունքների վրա.

Պետք է միջազգայնորեն ճանաչվի ԼՂ-ի ժողովրդի ինքնորոշման իրավունքը եւ պայմաններ ստեղծվեն դրա իրականացման համար,

-ՀՀ-ն եւ ԼՂՀ-ն պետք է ունենան ընդհանուր սահման,

-պետք է ապահովվի ԼՂՀ բնակչության եւ սահմանների անվտանգությունը:

Յուրաքանչյուր ողջամիտ մարդու համար ակնհայտ է, որ ամեն մի՝ քիչ թե շատ բարդ գործընթաց, առավել եւս հակամարտության կարգավորում, հնարավոր չէ իրականացնել միանգամից, մեկ օրում, այն մի քանի քայլով իրականացվող գործողությունների ամբողջություն է:

Ղարաբաղյան հակամարտության բոլոր կողմերի միջեւ համաձայնությունը պետք է մեկ փաթեթի մեջ ներառի բոլոր հարցերի լուծումներն ու այն մեխանիզմները, որոնք պետք է ապահովեն այդ լուծումների իրականացումը:

Հանրապետության նախագահը պետք է ձեւավորի համագործակցության այնպիսի միջավայր, որ ցանկացած կարող ուժ հնարավորություն ունենա մասնակիցը լինելու մեր տնտեսական զարգացումներին:

Պետք է բացառենք անկախության առաջին տարիների սխալներն ու բացթողումները՝ չանձնավորելով դրանք: Այսուհետեւ պետք է մտածենք ոչ թե աղքատության հաղթահարման, այլեւ ապահով եւ պաշտպանված հասարակություն կառուցելու մասին: Նույնիսկ ամենահեռավոր, սահմանամերձ գյուղի բնակիչը պետք է ապրի արժանավայել կյանքով:

Հանրապետության նախագահի խնդիրն է լինելու այնպիսի միջավայրի ապահովումը, որը կօգնի կառավարությանը հասնել այն նպատակային խարիսխներին, որոնք արտացոլված են ինչպես Հանրապետական կուսակցության նախընտրական ծրագրում, այնպես էլ՝ Ազգային Ժողովի հավանությանն արժանացած կառավարության գործունեության ծրագրում:

Երկրորդ փուլի բարեփոխումների գերակայությունները, որոնք սահմանված են կառավարության գործունեության ծրագրում, հետեւյալն են՝

- ազգային անվտանգության եւ կայուն զարգացման ապահովում,

- կրթություն եւ գիտություն,

- կառավարման արդյունավետ համակարգի ձեւավորում,

- տարածքների համաչափ զարգացում,

- Հայաստանի քաղաքացիների սոցիալական պաշտպանվածություն:

Ազգային ժողովում բյուջետային քննարկումների ընթացքում այս խնդիրներին կանդրադառնամ ավելի մանրամասն՝ ներկայացնելով կառավարության գործունեության հինգ տարվա թիրախները:

Իսկ այժմ կցանկանայի կանգ առնել մի քանի հիմնախնդիրների վրա, որոնք պետք է լինեն հանրապետության նախագահի ուշադրության կենտրոնում:

Գաղտնիք չէ, որ ժամանակակից աշխարհում մրցակցությունում հաղթելու գրավականը մտավոր կարողություններն են, գիտելիքների ստեղծումն ու ընդլայնումը: Մենք պետք է ունենանք միջազգային լավագույն ստանդարտներին համապատասխան կրթական համակարգ: Այս խնդրի լուծումն է այն բանալին, որը կառավարության համար բացելու է բոլոր զարգացումների դռները:

Երկրորդ, կոռուպցիան, ստվերային տնտեսությունը, մրցակցային անհավասար պայմանները բացառելու համար անհրաժեշտ է հոգեբանական բարդույթի հաղթահարում եւ բոլորիս կողմից անհանդուրժողական վերաբերմունքի ձեւավորում վերը նշված երեւույթների նկատմամբ:

Հարկերից խուսափելը, կաշառակերությունը պետք է դիտվեն անպատվաբեր եւ հանրության կողմից դատապարտելի երեւույթ: Մենք չպետք է հաշվի առնենք բարեկամական կապերը եւ ընկեր, բարեկամ, կուսակից չհամարենք այն մարդկանց, ովքեր խուսափելու են հարկերի վճարումից եւ հանդուրժելու են այս արատավոր երեւույթը: Մեզանում պետք է գերիշխի այն գիտակցությունը, որ դա պետությունը քայքայող ամենալուրջ հիվանդությունն է:

Մենք իրավապահ մարմիններից պահանջելու ենք էապես խստացնել պայքարը կոռուպցիայի դեմ եւ հանրային քննարկումների առարկա ենք դարձնելու բացահայտված հանցագործությունները: Այս առումով դատախազության, ոստիկանության, հարկային եւ մաքսային մարմինների գործունեությունը պետք է դառնա առավել թափանցիկ: Թափանցիկությունն է ապահովելու, որ այս խստությունը միեւնույն ժամանակ արդարացի լինի:

Հանրությունը չի հավատա իշխանություններին, եթե այդ պայքարը չառաջնորդի հանրապետության նախագահը՝ Հանրապետական կուսակցության ամենասերտ աջակցությամբ:

Հարգելի ներկաներ

Որպեսզի կարողանանք իրականացնել մեր նպատակները, մենք պարտավոր ենք անցկացնել լավ ընտրություններ: Եվ ես Ձեզ հավաստիացնում եմ, որ ունենք բավարար քաղաքական կամք, փորձառություն եւ կազմակերպվածություն՝ ի չիք դարձնելու աջից ու ձախից հնչող հոխորտանքները: Այս բազմազանության մեջ ուզում եմ առանձնացնել ՀՀՇ կուսակցությանը, որ ունենալով բացարձակ իշխանություն Հայաստանում մինչեւ 1997 թիվը, գործեց բազմաթիվ կոպտագույն սխալներ եւ ստիպված եղավ հեռանալ իշխանությունից: Դրանից հետո, եւ մինչ այդ, բազմաթիվ անգամ տրոհվեց, եւ թվում էր,

թե անցավ պատմության գիրկը: Բայց դասեր չքաղելով սխալներից, 10 տարի անց վերակենդանացման նշաններ է ցույց տալիս եւ հայտարարում, թե գնալու է մինչեւ վերջ: Ավելին: ՀՀՇ կուսակցության հոգեւոր հայրը՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը, հավաքույթներից մեկում ի լուր աշխարհի հայտարարում է, թե կազմաքանդելու են պետական բուրգը: Ի պատիվ մեր ժողովրդի, այսօր Հայաստանում ռեւանշիզմի վտանգը իսպառ բացակայում է, բայց սա մի գործոն է, որի հետ մենք հաշվի չնստել չենք կարող:

Զավեշտականն այն է, որ Լեւոն Տեր-Պետրոսյանն այնքան է կորցրել իրատեսությունը, որ հավատում է ռեւանշին եւ նույնիսկ խորհուրդ է տալիս հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանին եւ ինձ հեռանալ քաղաքական ասպարեզից: Պարտք չմնալու համար մի խորհուրդ էլ ես տամ նրան: Լավ կլիներ, որ նա մեղա գար, ներողություն խնդրեր հայ ժողովրդից իր գործած, մեղմ ասած, սխալների համար: Վստահ եմ՝ չի անի, որովհետեւ նա լեցուն է չարությամբ եւ անդառնալիորեն հետ է մնացել կյանքի ընթացքից: Նրա հուսահատ փորձերը վերադառնալ նախագահական նստավայր միայն մի նպատակ ունեն. ոչ թե այդ պաշտոնում ծառայել սեփական երկրին ու ժողովրդին, այլ վրեժխնդիր լինել բոլոր նրանցից, ովքեր երբեւէ մի սառը խոսք են ասել նրա հասցեին: Ու նաեւ ապացուցել, որ ինքը չի սխալվել, որ Ղարաբաղի խնդիրը հնարավոր չէ արժանավայել լուծել, որ հնարավոր չէ Հայաստանի զարգացումը առանց Ղարաբաղը հանձնելու, որ հնարավոր չէ համախմբել հայության ներուժը, որ ազգային գաղափարախոսությունը կեղծ կատեգորիա է:

Այս շարքը կարելի է շատ երկար շարունակել: Եվ պատահական չէ, որ նրա նյարդերը հերթական անգամ տեղի տվեցին ու մեր սկզբունքային վեճը նա վերածեց փողոցային բանսարկության: Պատճառը պարզ է: Դանդաղ, բայց հաստատակամորեն մոտենում ենք Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորմանը, բայց ոչ միակողմանի զիջումների ճանապարհով: Չնայած առկա բազմաթիվ խնդիրներին՝ կամաց-կամաց Հայաստանի տնտեսությունը սկսում է լիաթոք շնչել, հաղթահարվում է աղքատությունը, արագորեն մեծանում է պետական բյուջեն եւ որպես առաջին արդյունք՝ Հայաստանը հանվում է ցածր եկամուտներ ունեցող երկրների շարքից: Հայաստանում անց են կացվում քաղաքակիրթ խորհրդարանական ընտրություններ եւ պատրաստվում են նույնպիսի նախագահական ընտրությունների: Իսկ սա քաղաքական մահ է ՀՀՇ-ի եւ ՀՀՇ-ամետ ուժերի համար: Ահա թե ինչումն է բանը:

Այսօր ավարտելով այս թեման՝ ասեմ. Տեր-Պետրոսյանը հնարավորություն ուներ Հայաստանի Հանրապետության նախագահի բարձր պաշտոնում անմնացորդ ծառայելու հայ ժողովրդին: Տարբեր պատճառներով նա չկարողացավ այդ անել եւ Հայրենիքի համար ծանր պահին նա սեփական կամքով լքեց գլխավոր հրամանատարի իր դիրքերը՝ թողնելով հուսահատության եզրին հասած ժողովուրդ, քայքայված տնտեսություն, անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, պարտվողական տրամադրություններ եւ ի լրումն այս ամենի՝ մեզ պիտակավորելով: Այնուհետեւ տեղի ունեցան ողբերգական իրադարձություններ, կատարվեցին ծանր հանցագործություններ, ինչը հաճույքով հիմա նրանք շահարկում են: Բայց մեր ժողովուրդը, հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ, կարողացավ կայունացնել իրավիճակը եւ լավ հիմքեր ստեղծել երկրի զարգացման համար: Ու հիմա ուզում են կազմաքանդել պետությունը: Չի ստացվի: Ցանկացած փորձ կկանխվի:

Ճիշտ է, որ չկա չարիք առանց բարիքի: Այս ամենի մեջ լավն այն է, որ մեր ժողովուրդը հնարավորություն ստացավ համոզվելու, որ մենք տարբեր մարդիկ ենք, որ մեր պատկերացումները Հայաստանի ապագայի մասին տարբեր են: Եվ եթե այս 10 տարիների ընթացքում քաղաքական գնահատականներ չենք հնչեցրել, ապա

պատճառը միայն ու միայն հասարակության մեջ ավելորդ լարվածություն չմտցնելու ցանկությունն էր:

Հարգելի բարեկամներ

Իսկ ինչպիսի՞ն եմ տեսնում ես Հայաստանը հինգ տարի հետո:

Ցանկացած հայ ընտանիքի համար կրթությունը եւ գիտելիքը լինելու են ամենամեծ պահանջարկ վայելող արժեքը:

Փոխադարձ հարգանքը, սերը եւ ներողամտությունը կլինեն մեր կենցաղավարության անբաժանելի մասը:

Ամուր, բազմազավակ, ավանդական հայ ընտանիքը հինգ տարի հետո տեսնում եմ որպես օրինաչափություն:

Հայկական ընտանիքների եկամուտներն առնվազն կկրկնապատկվեն:

Ցանկացած նորաստեղծ ընտանիք կունենա բնակարան եւ ավտոմեքենա ձեռք բերելու հնարավորություն:

Վստահեցնում եմ, որ այս նպատակներն իրատեսական են եւ իրագործելի:

Ուրեմն առաջ, առաջ դեպի հաղթանակների Հայաստան:

Առաջ, դեպի հաղթանակած Հայաստան:

Շնորհակալություն ուշադրության համար: